

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

— * * —

ՍՐԲԱԽՈՍՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵԿԵՂԵՑԵՈՅ

ԵՒ ԱՌԱՆԶԻՆՆ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Տես յէջ 264)

Կաւանդեն թէ ինքն Դամասոս եղած է
հոսպմէական եօթն մայր եկեղեցեաց, և քանա-
կութ երկրորդական սեպուածներուն խորհր-
դական շրջանն (cycle) վերջնական կերպով
սահմանողը. որոց համար յատկացոց ժա-
ռանգաւորք, քահանայքն ու կրօնադորները,
սաղմուերգավոթեանց կարգ ու ժամանակ ո-
րոշչելով: Այս ամէն բարեկարգութեանց օգ-
նական և ձեռնառու էր Սուրբն Հերոնիմոս,
որ հաւանականաբար եկեղեցական պաշտա-
մանց մէջ զործածուելու համար թարգմանեց
Հին կտակարանին այլ և այլ զրբերը, ու
մասնաւորաբար մարգարէքը, աշցէ անցուց և
յարտարեց խուահան կոչուած թարգմանու-
թինը, և սաղմուաբանը. և իրեն յանձ-
նուեցաւ զարձեալ մարտիրոսաց անուանց ցու-
յակին առաջին կարգաւորութիւնը, որով ինքն
եղաւ առաջին շարազրիչ մարտիրողը զրոց:

Հայրապետական կոնդակ մը կայ որ եկե-
ղեցոյ և հասարակաց պաշտամանց մէջ կար-
գացուելիք կամ ոչ զրբերը որոշած ատեն,
մասնաւորաբար կը յիշատակէ հոսպմէական
վկայարանութեանց կամ Հարանց վարուց
զիրը մը՝ զոր Հերոնիմոս և Հոռովինոս այն
ինչ հասարաբակեր էին: Այս կոնդակին տուո-
վը ոմանք զիեւասիոս քահանայապեա կը
համարին, այլք զիրմիզզաս, զիեւոն մեծն,
զինովիկենտիոս կամ դիամասոս: — Որչափ
ալ այն ժամանակաց հայրապետց զանազան
առիթներու մէջ պատսիրեր էին, բայց
սկզբնաւորութիւնը անշուշտ դամասոսի կը
պատիկանի:

* *

Վայրկեան մը կանգ առնունց ասաէն, նը-
կատելու Սրբոց փառքը ի հանդիսական ըն-
թերցման անոնց վարուց և վկայաբանութեանց՝
բազմախուռն հաւասացելոց առջև, որը կը զու-
մարէին ընդ յարկաւ քրիստոնէութեան նախ-
կին մայր եկեղեցեաց, կամ հեթանոսութեան
կամարակապ սրահից մէջ՝ որ սրբակերտուած
էին նոր հաւասոց նուրիմամբ: Այսիւ ունկին-
դրաց բազումիւն՝ նոյն խոկ մարտիրոսաց՝ որոց
նահատակութեան պատմութիւնը կը կարգա-
ցուի որդիին կամ թոռունք են, տեսող վերջին
պատերազմաց, և եղարքը՝ երկնից թագաւորէն
պահուած անմահանուն և յառերժափառ ե-
րանելեաց: Հայրապետը նստած է յեկեղեց-
ուջ իր գանցիցը փայ, զկեսաւորուած հին
արքայակերպ պատմուճանաւը, և որոյ փառքը
և շնորհը՝ կ'աւելցընեն խոսովանողի վիրաց
սպիները: Զորս բոլորը՝ նստած կամ ոսքի
փայ, կը նկատուին երիցունք և քահանայք,
սարիաւազունք, զաքը ժամանգաւորաց, զեւ-
ացիք, հին զինուորը՝ վերամարտիկը տո-
տուածաւուր և երկնապարզի հաւասոց: Ըն-
թերցողը՝ որուն անկնդիր կ'ըլլան, վերջին
խոսովանող մ'է, արդէն մարտիրոսանալու
սահմանաւած ու թերևս մահուան վճիռն ըն-
դունած անձ մը, որուն ժամանակը միայն
պակսեր է վկայական արմաւենին ընդունելու:

Յաճախ ինքն ծերունազարդ հայրապետն
է՝ որոյ ոյժը պակսելով կը բռնազատուի
քովը կեցած սարկաւազց յենլով, լսեցնեք

իր ձայնը, զոր քիչ յառաջ լսեցուցած է դաւագործությունը՝ ինչ որ բոլոր ժողովուրդն այլ իր հետք ականատես է, երկունից փառաց մէջ պասկեալ և զրօր մը պատերազմը և տարած յաղթանակը։ Ենթազրենք թէ լինալու եմք. զեռ կիսաւարտ եկեղեցոյ մը մէջ, զոր քաղքին հոյրազետը եկած է նուիրագործել ի պատին յիշասակի երկուց վկայից։ « Անաւասիկ զրուատ ներբողենին՝ զոր խօսեցաւ խստովանողն Քրիստոսի, փառաւորեալ վկայակերն, սուրբ հայրն Թէոդորոս, Անտիոքայ արթեպիսկոպոս, ի պատին Քրիստոսի և արիական զինուորելոյն Թէոդորի՝ սրբայ Անասովիոսի, և Թէոդորոսի արքաւելասակի, սրբայ Յովհաննու եզիպատացոյ, որ սպան զիլիշապին մեծ և փրկեց զորդի այրուցն, և փառաւորեց զանուն Քրիստոսի։ Ուատի սուրբ հայրապետն կ'ուուէ օր ի պատին վկայից։ Ինք զրուէտ անոնց ներբողեանը՝ ի վկայարանի Թէոդորոսի Անասուլեայ։ և խուռն բազմութիւն հաւատացեալ ժողովրեան գումարուած յեկեղեցւն, յաւոր յորում կը կատարուէր տան յիշասակի Թէոդորի սորաւելասակի, ի բան ապիս ամսոյ, յաւոր տարեկանի նուիրման տաճարին կառուցելոյ ի պատին որդույն Անասովիլեայ, միջներ զինաւորուած չէր շինութիւն տաճարի սորաւելասախն. վասն զի այն ատեն նուիրական տարեկարձի հանգէւը կը կատարուէր ի տաճարի յաղթողին Անասովիլեայ, ի փառ Քրիստոսի, ամէն»։

Նոյն մազթանաց ձայնը՝ կը կրկնէին կըրկին գասց, հրեշտակաց յերկինս և որդուց Աստուծոյ յերկիի. և որպէս զի արձագանգ մը միացընէ իրարու հետ այս կրկին զատոց ձայները, սուլոր էին յաւելուլ ի ժամու ընթերցման սրբոց վկայից արիական նահատակութեանց պատմութեան, քաղցրաձայն հոգեզմայլ երգեր և մեղեղփիք. այն մեծավայլ վելուզ տաղերը, հեթանոսութեան խաւարային ժամանակներէն հասած, բայց քրիստոնէական սիրով ու սրտով մաքրուած և սրբուած։

Իրենցմէտ առ մեզ իջած, սուրբ և նուիրական անկապտելի ժառանգութիւն մը. ուրով նոյն զգացմամբ և զմայլմամբ մեր հրա-

շակերտ եկեղեցեաց մէջ կ'երկրորդենք, ինչ որ նորա հալածուած և լոյս աշխարհի բնակութենէն մերծուած՝ բանտից և գետնապամբանաց մէջ։ հաւասարապէս աշուԾնի վերցը-նելով յերկինս, և զինուորեալ եկեղեցւոյ ձայնը խառնելով յաղթականին հետ փառաւորել « Անստուած՝ որ սբանշիլի է ի սուրբս իր»։

Ալյափիսի էր Սրբոց վարուց փառաբանութեան առաջին պարագայն, և որ հաւանականաբար երկարատե եղաւ յեկեղեցւը, ի պատին և ի փառ Սրբոց, անոնց վարքէն և վկայական կէնսագրութենէն քաղելով. և մասնաւոր երգերով զրուատելով զիրենը յաստածածամունս, և առանձինն իրենց յիշասակին նուիրուած տարեկանաց օրերուն և հանդիսութեանց մէջ։ Ցոյն եկեղեցւոյ հարբ և վարդապետց՝ բազմաթիւ այսպիսի երգեր յօրինեցին, որոց հետեւղ և նախանձաւոր եղան նաև այլք յարեւեան աղգաց, ինչպէս նաև մերին՝ այնշափ գովանին և զմայլելի երգօց շարականաց և տաղից։ Այնչափ մեծ էր իրաւամբ հաւատացեալ սրտերու վրայ անոնց ապկեցութիւնն՝ որ Քրիստոնէութեան սուրբ կրօնից նախանձելի օրերուն կերպով մը կը փախարքը զիրենը. և թէ երբեք յիրենց ժամանակաց թուլութիւնն կամ նախնական եռանկեան պակսութիւնն զոմանս կը արտեմեցընէր, զայլս կը լքուցանէր կամ ուղիղ և երկնընթաց աստուածուոց յուղոյն. սայմաքել կամ զարտուղել կոտար, նուիրական տաճարաց մէջ՝ ինկոց անուշակու բռումանց հետ սրտերէ և բերնէ հոչշիուած այս սիրոյ և հիացման ձայններով՝ կը յուզուէին ու կը խանզազտէին մինչեւ յարտասոս։ Եւ ինչպէս, օրինակ իմն, անտարեբր կրնային մնալ և անկարեկիք՝ երբ եկեղեցին անոյշ ձայնովը և խօսքերով. կը պանծացընէր ոչ լոկ բազմայզթ մարտիրուսաց և զկայից, առաքելազորդ հայրապետաց, երկնից զարմանալի առացինեաց, այլ և մանկան մը լուսահրաշ փառքը, զոր անզութ դատաւոր՝ մօրը աշքին առջև, աթոռոյն աստիճաններէն վար կը զորէ, երբ այդ հրեշտակիքը՝ անոր զուանըքը ու դորովը կ'արհամարհէ, մօրը զիրին ու սէրը փառաելով.

ու պատուանդանէն արինահոս պլաով ու շա-
դախեալ արեամբ՝ կիամեռ կը փոխադրուի
ի զիրկս ու ի համբոյք մօքն, և անտի ի գիրկս եկեղեցւոյ սրբայ՝ ներրողին և գովու-
թեամբք վատի կայսեր, Անասով և Գեր-
մանոս պատրիարքաց և մեր Գետադարձ
հայրապետին. և իր եկեղեցիքը կ'ունենայ
ոչ միայն յարևելս, այլ և ընդ ամենայն եր-
կիր՝ մինչ ի Պարփս, ի Տուլուզ, և ի Նէ-
վէր՝ ուր մայր եկեղեցին իրեն անուանը և
յշասակին նուիրուած է (St. Cyg.):

Ո՞վ այս գեղեցիկ և սրամարուզի առղից

Վարդագյն վառեալ ծաղիկ
ի նորատունի բուրսատսնի...
Աղասինի քաղցրաբարբառ
Հեղարանեալ ըզաէր Յիսուս.
Վլսակահոս արեամբ ներկեալ
Ռսկերողոջ գեւարուսիկ...
Բարունւոյ վարդապետին
Համեղ ողկոյզ արեամբ նըմշեալ
Պլսակեցար ի Քրիստոսէ.

Աէջ, չի նկատեր թէ ի՞նչպէս սիրա և հանճար
կը միաբանին՝ գերագյն ու արքայութեան
անմահական դրախտէն եկած ներշնչմանց
խօսքն ու բացարութիւններն գտնելու, ա-
նանկ՝ ինչպէս հրցատակը իրենց աստուածա-
տուր քնարից թելերուն վրայ: Քրիստոնեայ
Յունատան՝ այս նկատմամբ նախանձելիք մը
չօւնի՝ իր հեթանոս անցելոյն վրայ. նյունպէս
և արևմտաբ՝ որոյ քիչտոնեայ Պինքարոսին՝
սրբոյն Պրուկենաեայ երգերն՝ ամենլնտիրք
լեզուով և իմաստներով, արժանաւորք են
ովհիմբիական ծափաճայն կրուատեաց, և ա-
ռանց տարակուսի գերագյնք քան իրենց ժա-
մանակաց հոեւորներու և ներրողաբանից ա-
մէն երկասիրութեանց:

* *

Սակայն հասարակաց ընթերցողք, մանա-
ւանդ ի Յունատան, բացարձակաբար կանո-
նական ընտրութեամբ և հաւանութեամբ ե-
ղած չեին միշտ. զի երրեմ և իմաստակը
(sophiste) կը բացարանային յամբիան. և
Յուլիանոս ուրացողն ընթերցողի պաշտօնն
ունէր, և հոկտորք ամբարձան մինչ յեպիս-

կոպատական աստիճան: Վարժարաններու մէջ
կրթուած ճամարտակաց աշբին՝ հնոց պարզու-
թիւնը տաղակալի երկեցաւ, Փլաւեանց գա-
րերուն՝ յառաջ կամ անմիջապէս յետոյ քան
վլսակաղաւթիւն եկեղեցւոյ, արտաքին ճար-
տարախօսութիւնն ունեցաւ իր ազդեցութիւնը՝
քրիստոնէական կրօնից մայր եկեղեցեաց մէջ
եղած ընթերցմանց վրայ. — ներրողաց երկա-
րախօսակաթիւններն էին ասանք: Փլաւեանք
ունեցան իրենց տիկարութիւնը՝ ծառայական
նմանողութեան մը կեսարեանց և անտոնի-
նեանց. և որյափ ալ տննաց ընծայուած առ-
տուածական փառքը շիրցան ձեռք ձերել, այլ
ներրողաբանից և զովաց հրասարակական
ցոյցը մոտացիւր փնտուեցին և սիրեցին: Երբ
կայսրը կ'երենար, կամ ի պատի իրեն
հանգէս մը կը կատարուէր, թատրոնը կը
բացուէր, կայսեր կիսարձանն ծաղիօց կը
պսկուէր, և քաղաքին ճարտարախօսը կ'եր-
գուցնցընէր ամէն մուսայըը, ստութեան ա-
մէն աստուածներն շնորհք և փառը մաղմե-
լով՝ նոր ու միշտ յաղթող աւգոստափառ
կայսեր:

Լիբանիբոսի, Եւմենեայ, Պակաղոսի քանի
մը Էջերը մոտագրութեամբ կարգալէն ետքը՝
անկարելի է չնշմարել յոյն եկեղեցւոյ այլ-
ևայլ սրբախօսութիւնն աէջ՝ անոնց ժամա-
նակաց զգրոցաց արուետատկեալ ոճոյն նմա-
նութիւնը կամ գէթ հետքը. թէպէտե փու-
թանց լսել թէ դասական համարուած այդ
օտարօսի ձեւն ալ ընդունելով՝ վկայագրու-
թիւնը իրենց հիմնական ամբողջութիւնը կը պա-
հէին անպարար, մանաւանդ թէ քրիստոնեայ
այդ հոչականուն աստուածարելոց մեծութիւնը
և արդարակիբո զովութիւնը՝ լեզուի և բանից
արուետատկութենէն ամենեւին չէր փասուեր: Խօսքերնուս ստուգութիւնը ցուցընելու հա-
մար՝ բաւական է մեզ, ի մէջ բազմաց, եր-
կու հին վկայարանութիւն մէջ բերել, զՄըր-
ուունոյն կեկիլիայ, որ հաւասարապէս յօրի-
նուած է հալածանաց դարերէն անմիջապէս
եաքը, և զՄըրոյն Միմփրիանու, որ եւմե-
նեան զգրոցին կնիքը կը կրէ, և անշոշա
Աւգոստոս անուանի հոեւորին աշակերտացը
միոյն երկասիրութիւնն է:

* *

Երկրորդ պարագայն կամ՝ զարը որ աւելի համառու է յարեւելս քան ի մօւս, նոր տեսակ մը հոգեւոր զբուցաց (légende) երեցոց, որով կերպավ մը ընդարձակ ասպարէզ առին սրբախօսութիւնք և որբոց խոստվածնողաց պրամէք կամ գործք Մարտիրոսաց աստուածակրաշ արիսւթիւնը՝ եկեղեցւոյ իրեն խաղաղութիւնը ձեռք ձգելէն շատ յառաջ, անապատներու մէջ իրեն ապատէնը գտած էր. և հոն երևացան նորանոր մարտը և առաջինազործութիւնք, երկարատեւք և թերեւաւելի տաճանակիրք քան յամփիթատերս: Արտար և իրաւացի էր որ նոյն պատիւը ընծայէր եկեղեցի այս զոհին՝ որ թէպէտ անարին էր, բայց ինարուկաց հրով և սիրով կը ձենճերէր: Մարտիրոսը՝ խոստվածնող մէր, իսկ անապատաց լուռթեան ներանձնաւորը՝ պատերազմող. և նմանութիւնը՝ միայն բարի վրայ կայացած չէ:

Դարերը քննելով, ստուգուած է որ այս նոր պատիւ և մեծարանք՝ շորբորդ գարուն սկիզբէն ունեցած է իր սկզբանաւորութիւնը: Սրբոյն Մարտիրոսէ յառաջ՝ որ յարեւմաւս առաջին կարգագիրը կը համարուի, յոյն եկեղեցւոյ մէջ մեծարուած կը գտնենք զՄուրբըն Եփրեմ, զԱթանաս, զՀիլարիոն և զԱստոն, որ նոյն իսկ մահուան անկողնոյն մէջ խնարհութեամբն զգացած սաստիկ սարսափմամբն՝ գորովանօք կը հիացնէ զմեզ: Նոյն զգածմունքն՝ կը տանի զմեզ, մի և նոյն հետեւանքով, մինչև առ սուրբն Գրիգոր պանչելազործ: Իր ներդրողաբանը, համանուն նիւսացի սուրբը, կ'աւանդէ թէ ի վարժանելն յայտարարած ըլլայ, թէ ամենեին կամք չունի ոչ յառաջ՝ և ոչ մահուընէն ետքը, անոնք թողով ո՛ր և իցէ կերպով, և թէ կ'ուզէր ինչուան գերեզմանին մէջ՝ օտար համարուիլ ի մէջ անծանօթից: Բայց անապատաւորաց այլ երկար և մեծավայելու հոգեվարքը չօրս կողմէր պատող առանձնութեան և լուռթեան մէջ՝ իրենց ամենէն անծանօթ մնալու փափարին մէջ, ամենուն հիացումը և գովեստն վրանին կը հրաւիրէր, և նուիրմանց յաճախութեան հետ-

յաղթանակաց թիւն ալ կը բազմապատկուէր. հրաշից և զմայլմանց հետ՝ անոնց վրայ իրաւացի զրուատանք:

* *

Անոնց առաքինական և անարին նահատակութեանց պատմութեան և յիշատակաց յատակագիծը զրին վլհաղոյն վարդապետք: Ինցեանք իսկ սուրբ խոստավանողք: Սուրբն Աթանաս՝ երանելույն Անտոնի մարմինն ամս փոփող փոսցն վրայ՝ սիւն մը դրաւ, որ նոր աշխարհին համար լուսաւոր փարոս մը եղաւ, և սրբախօսութեան այդ ժամանակին վրայ նորահրաշ պայծառութիւն մը ծագեց. ունեցաւ իր շարայարողքը՝ զՀերոնիմոս, զՀովուիրինոս, զԱլպակիլոս Սեւերոս, զԱստերիոս, Պալլասիոս, Կասախանոս, Նիւղոս, Թէպողորետոս, Կիմաքս, Յուլիանոսէ Մուսկոս, Սոփրոնիոս, Դիմինխոս Փարոն, զարդաւագոնն Հովհաննէս, Պելազիոս և Յովհաննէս, զԳրիգոր Միեծն և զԲեկոս:

Հոգնոր պատմաց այս մեծ բանակին առջեւ կանգ առնաւնք, և համառուիւ Սրբոց վարոց պատմազրողաց իրարու հետ ունեցած ոնց նմանութիւնը նշանակենք: Ամենքն ալ, զէթ մեծագոյն մասը՝ անուանից են իրենց սրբական վարուց, և կարեւոր պաշտամամբըն զոր վարած են յեկեղեցաջ, վարժուած իիստ շրջանայեցութեան մը: Ականատեսոյ են իրենց պատմածին, անոնց բարեկամին, այշակերոց և ժամանակակիցը. կ'աւանդեն զայն որոյ աեսողք են, և չունին իրենց նախընթաց մը՝ որուն հետեւն: և ժամանակաւ, աերեւաւ, պաշտամամբը իրարմէ հետու՝ չէին կրնար աւանդածին իրարու խորդպակցելով զրի վրայ առնուզ. բայց և այնպէս՝ միաձայն և համաձեւ են իրենց արտազրութիւնքը. ի սրբոյն Աթանասէ մինչ ի թեզա, Թէրեպիզայ անապատներուն՝ ինչպէս լինդիփանեայ հիւգերուն մէջ ի ծայրս արեւմալից, մի և նոյն պանծացի տեսարանն է որ կը ներկայանայ, նման զարմանահրաշ գործեր, նոյն պարզւնակ և դաշնակաւոր մեծաւթիւն՝ անապատաւոր ճննաւորաց. ամէն աեղ կ'առատանայ և կ'իշիւ գերբնականն. կատարեալ է ամենասրեց զործն աստուածալին. բարի և

չար հրեշտակը՝ ունին և կր կատարեն իրենց գերը, և մարդ՝ ի մէջ երկնից և երկիր, հաստատուն՝ սրբոց և ընարելոց գրեին մէջ բռնելով իր տեղը, Այսպիսի ներշնչմամբ զրուած և մեզի աւանդուած են՝ անապատի հարց կենսագրութիւններն, որ իրենց անսերեւելթ ոճովն ու բացատրութեամբք պիտի զարմացընէին անշոշա մեր ժամանակաց ամենէն աւելի դժուարահնելի ակադեմիաներն, եթէ երբէք սանսկրիտ մտաենազդութենէ ծանօթանային մեզ, կամ իրենց պրահնայց բերնով աւանդուէին այն իմաստուն թելազրութիւններն :

* *

Բայց որշափ առ, նոյն իսկ մեր հայկական մասենագրութեամ մէջ, նոխ է այս անունը կրող հաւաքում, յասորի և ի լոյն զրոց կրիին փոխազդութեամբ, այլ հարկ է խոստովանիլ թէ գուցէ ընարելազդոյն մասն որ անշոշա կրնար աւելի գոհ ընել զհանճար և զգիտութիւն՝ գեր եւս թագուն մնացած է, ծածկուելով յանմուռ խորածորս քարայրից, որ անապատաւորքն ուզեցին թաղել իրենց փառք :

Յեկենք միայն քանի մի նշանաւոր անձանց երկերն՝ մասնաւորաբար յոյն եկեղեցւոյ և մատենազդութեան մէջ. յորոց առաջնաթեան պատիւը կ'ընծայենք Փալլասիոսի (367-420), բարեկամի սրբոցն Յովենանու Ռակերեանի և եպիսկոպոսին Հելենոպոլոց, Ազրեցան նա ի Թերայիդ, և միայնաւորեցաւ ի Սկիտէ. աշակերտ էր Եւագրի և Գորգուէսի, և բարեկամ Նեղոսի, Ընկերակից ունէր յայնմ առանձնութեան՝ զհարազատ եղայրն և զարմութիւն սրբոց անապատաւորաց՝ որոնց վարքը զրեց և իրաւոներն մեզի հասուց : Իր զրուածներն եկեղեցեաց մէջ հրապարակաւ կը կարպացուէին :

Եւագր պոնտացի († 399) աւարտեց Պալլասիոսի երկասիրութիւնը :

Հերոսկիոսս (402) որ ի կիպարսէ եկաւ ի Սկիտէ, և ասպա եպիսկոպոս եղաւ Եվիսոսի, առաջին հեղինակ է Պարտուկ (Պարածետօս) կողուած հաւաքման :

Տիմոթէոս արքեպիսկոպոս Աղեքսանդրից, որ ըստ Սոլոնեսեայ՝ զրած է զպատմութիւն վարուց անուանի ճգնաւորաց և միանձանց, և որ ձեռութեամբ հասած չէ կորուած է նմանապէի՝ հոչականուն թէկողորոտուի († 458) Աստուածաւէր պատմուրիշն (փլաթեօչ տօրիօն) երկասիրութիւնն, որ էր Քաղաքավարուրիւն ձգնաւորաց (ծաշեւու ուլութէա) :

Բայց հասած է մինչև առ մեզ Յամիաննու Մուկոսի Մարգաստանն հոգիուր Անապատէ անապատ այցելէն եաքը, յԱսորիս, յԵղիպատոս, յԱրիրիէ և մինչեւ յարեմուտո, յօրինեց այդ երկը՝ Սրբոյն Սարայ մենարանին մէջ, զոր և ընծայեց Սրբոյն Սոփրոնիսի Երուսաղեմի, կոչելով իր հաւատարիմ և սրբազն սրդին. որ և նա իւր կողմանէ աւելցուց այդ զրուածքին վրայ զտարեփիրս Թերայիդայ և զջրամախոսութիւնն Սրբոյն Գրիգորի, ինչպէս յիշեցնէր : Յառաջ և քիչ յետոյ քան զՍոփրոնիոս երկեցան Յովիշաննէն կիմարոս և Անաստասիոս սինայեցի, որը երկիրած և նորիսական սիրոլ և եռանկեամբ ի մի հաւաքեցին ինչ որ տեսեր և լսեր էին Թերայիդայ վերջին հրաշակեաց վրայ և սինէական լերին և Սիրիոյ միայնանցոց : — Կը Թողունք յիշառակել ասսնցմէ ետքիններն :

Բայց ինչպէս Որբոց վկացարութիւնք, այս սրբազնն և մեծարոյ երկասիրութիւնք ալ ունեցան և կրեցին իրենց հավածանքը վասն զի կոստանիքն կոպրոնիմոս և խուժանն պատկերամարտից և այլք՝ իրենց յաջորդը յիշանութեան և յատելեաց պատկերաց սրբոց և քիշտոսական կրօնից ճշմարտութեան, կոտեցան աննոց գէմ և ջանացին բնաջինջ ընել յաշխարհէ :

Փօսայ ժամանակ և անկէ եաքը՝ կրօնական կերպարանափիսութիւն մը, արևելից և արևմտից անջրպեալ՝ ունեցաւ իր ապկեցութիւնը նաև սրբախօսական մատենազդութեան վրայ : Մետափրատեանց գարն և պարագայն էր այն, բայց բարեբարդաբար արգէն կազմակերպուած էր այն ասեն յոյն վկայագրութիւնն կամ յայսմաւորք, սուրբն թէսդրոս Սկոտակ՝ իններորդ զարան, տեսեր

էր և մեզի աւանդեց թէ երկոտասան ամ՝ այդ պատուական և ընափր յիշատակարան՝
բողջ հատողք անոնցմէ կը պահուէին եկելից անցաւ յարեմուս, թողանվեան
ղեցեաց մէջ ընթերցանութեան համար. և հմուտ և բազմավաստակ վկայագրողաց ձեռքը :

(Շարայարեի)

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՇԱՆՏՐԻ ՑԱՐԵՒԵԼՈ

(Տես յէջ 255).

ԻԶ

Մեծ ու փոքր Արարատ . — Ճնարանն և կազմուրիւն . — Սարդար-թուղաք կիրճ . — Վերելք . — Մեր բանակատեղին . — Նկարագեղ տեսիլ վայրացն . — Մաղրանք և աղօրք կողակաց :

Յ Յուշիս . կը հասնիմք յԱրալզգ, որ Մեծ Մասեաց տարուաը կառուցուած զիւզ մ'է, 832 մետր բարձրութեան վրայ, ու րով ճամբայ ելլելնէս . եաբը՝ կրնանք բսել թէ անմիջապէս վերելքն ալ կը սկսինք :

Հանգիստ ճամբայ մը կը տանի զենք մինչ ի Սարգար-բուզաք, բայց բաց ի փշալից թուփերէ երկիրը ուրիշ բասականութեան հետքը չունի : Բիրաւոր գեղեցիկ մողեզք (Phrygonocephalus Raddei) ասդիս անդին կը վազլըռաւեն, նոյնպէս գեղեցիկ միջատը՝ յորս հոչակեալ է Խ'halangiaw: araneodes կոլուածը : Օթեւանը հեռի է և դժուարուտ,

զի բաց յարագ վերելից՝ ծարաւէ ալ զմբնավարար կը նեղութինք, և աեղ մը ացունիս չի հանդիպիր ջոյ նաև փոքրիկ քանակութեան մը : Տեղույն ցամաց նկարագիրն անտարբեր կ'ընէ զիս արօտագեղ վայրացն՝ որոց կը հանդիպիմք, և երիխարաց բազմաթիւ երամակին՝ որ գուշակել կու տան թէ մատեցած ենք կողակաց բանակետղին՝ որով մեր կրած զժուարութիւններն լմըննալու վրայ են :

Հարիւրապետ մը կը փոխաց առաջ անց նիլ ծանուցանելու մեր ժամանաւմը . ու երբ

ժամը երկուքին կը հասնինք՝ ուղղակի կ'առաջնորդին ի վրան սպային, և նա ամենայն մեծարանք և սիրալիք ընդունելութիւն կը ցացընէ, մինչև որ ժամանեն կարաւանն և մեր յասուկ վրանաց հանգերձանք : Ճեսնելով հոն ջուր և դալարի՝ որ գեղով և զօլութեամբ կը թուին մրցիլ, ինքզինքս արցայութեան մէջ փախազուած կը կարծեմ : որովհետեւ Զանկէզուրի ամենազեղ անտառներէն ասդին՝ աչքերու տեղ մը տեսած չէին այսափ բազմութիւնն և շնորհ ծաղկաւէտ, և երբէց թարերու շաեմարանած չէին այշշափ կենդանի և մաքուր օդոց պաշար :

Եւիսէ Ծիրկիւ գաղղիացի աշխարհագիր՝ մեծանան կարլ Ծիխոսէր զերմանացւոյն հետակելով կ'ըսէ, թէ Արարատ լեռը կեղրոնական սրածայր մ'է բարձր ուարահարթից՝ որ հին աշխարհին մէջ տարածուած են՝ բարեյուաց զինին մինչ ի կիրճն թերինսիի, և կը բարձրանայ ընդ արևմուեան երկայնութիւն Երասխայ և Եփրատայ միջոցն եղող հրաբխային լերանց շղթայից :

Արարատ, կամ ի Հայոց տրուած Մասիս անուանք, մեծութեան և վեհութեան գու-